ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության

ծառայության պետ

Նելլի Դավթյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետի (ադմինիստրատիվ օգնականի) կողմից կատարված

աշխատանքների վերաբերյալ

(16.06.26 թ. - 5.08.26 թ.)

2026 թ. հունիսի 16-ից 2026 թ. օգոստոսի 5-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ (ադմինիստրատիվ օգնական) Գայանե Վահանի Գրիգորյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ՄՔԾ պետի հրահանգով ներգրավված եմ եղել «Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագրին» առնչվող աշխատանքներում՝ նամակագրություն, թարգմանություններ, ՊՄԳ պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագրերի խմբագրում, մասնավոր գործընկերոջ թիմի հետ հանդիպումների օրակարգերի կազմում, մասնակցություն բանակցություններին, աշխատանքների ընթացքի վերահսկում և այլն:
- Ակտիվ մասնակցություն եմ ունեցել անձը հաստատող փաստաթղթերի դիզայնին վերաբերող բոլոր քննարկումներին, ապահովել կապը մասնավոր գործընկերոջ և հայաստանյան մասնագետների միջև:
- ՆԳՆ արարողակարգի վարչության հետ համագործակցությամբ կազմակերպել եմ ՆԳ նախարարի գլխավորած պատվիրակության 2-րդ այցը Նիդերլանդներ՝ մասնակցելու նոր կենսաչափական անձնագրի նախատպագրությանը:
- Մշակել եմ ՊՄԳ-ին և վիզաների ազատականացման գործընթացին վերաբերող հարցերի պատասխաններ՝ ՆԳ նախարարի 2 հարցազրույցների համար:
- Աջակցել եմ Կենսաչափական նույնականացման համակարգի ներդրման ռազմավարական հաղորդակցության և հանրային իրազեկման ծրագրի մշակմանը:

- Կազմել եմ տեղեկանք սահմանների համալիր կառավարման եվրոպական մոդելի վերաբերյալ:
- ՆԳ նախարարի հետ Հարլեմում անցկացված հարցազրույցը թարգմանել եմ անգլերեն, կազմակերպել ետկադրային ձայնավորումը և ստացված տեսանյութի տրամադրումը մասնավոր գործընկերոջ հաղորդակցության թիմին:
- Համակարգել եմ նոր կենսաչափական անձնագրին նվիրված տեսանյութի համար տարբեր վայրերում անօդաչու թռչող սարքով նկարահանումների կազմակերպումը և նյութերի փոխանցումը մասնավոր գործընկերոջը:
- Կազմել եմ տեղեկանք հունիսի 16-ի դրությամբ ՊՄԳ ծրագրի ընթացքի վերաբերյալ:
- Այցելել եմ ՀՀ տարբեր կետերում «ՀայՓաս» ՓԲԸ կողմից վարձակալված գրասենյակներ՝ ծանոթանալու շինարարության և վերանորոգման աշխատանքների ընթացքին:
- Մասնակցել եմ ՊՄԳ պայմանագրի տեխնիկական պահանջների քննարկմանը նվիրված երկօրյա աշխատաժողովին Դիլիջանում:
- Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ՄՔԾ պետ Նելլի Դավթյանի այլ բազմաբնույթ հանձնարարականներ:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ (ադմինիստրատիվ օգնական)

Գ. Գրիգորյան

«5» օգոստոսի, 2026 թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները գնահատում եմ «գերազանց»

ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ

Նելլի Դավթյան

«5» օգոստոսի, 2026 թ.